ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 12>> ապրիլի 2013թ. N: 87-Ա ք. Գյումրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 1 հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին նախատեսված <<Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում>> ծրագրի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված հատկացումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի կողմից ընտանիքի սոցիալական վիճակի ուսումնասիրությունների եզրակացությունները և ֆինանսական օգնություն տրամադրելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի 2013 թվականի ապրիլի 12-ի թիվ 7 արձանագրությամբ ներկայացրած առաջարկությունը.

1.Արկի պայթունի հետևանքով/երկու քաղաքացի/և Ռուսաստանի Դաշնությունում ավտովթարի հետևանքով /հինգ քաղաքացի/ մահացած ներքոհիշյալ քաղաքացիների հուղարկավորության ծախսերը կատարելու համար, Վահրամաբերդ, Սարալանջ, Նահապետավան, Սպանդարյան, Արթիկ համայնքների ղեկավարներին տրամադրել գումար հետևյալ չափերով՝

Անուն, Ազգանուն	*Հասցե*	*Գումարի չափը*
Գոռ Պետրոսյան	գ.Նահապետավան	100000/մեկ հարյուր հազար/դրամ
Արսեն Աբրահամյան	ք.Արթիկ	100000/մեկ հարյուր հազար/դրամ

Ցոլակ Հովհաննիսյան	գ.Սարալանջ	200000/երկու հարյուր հազար/դրամ
Վաղինակ Բաղդասարյան	գ.Սպանդարյան	100000/մեկ հարյուր հազար/դրամ
Աղվան Մարտիրոսյան	գ.Վահրամաբերդ	200000/երկու հարյուր հազար/դրամ

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ – տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանին՝ ապահովել վճարման կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝